

«Հաստատված է»

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական
խորհրդի 2012թ. մայիսի « 12 »-ի նիստում
(արձ. № 2)

ՏՆՕՐԵՆ՝

Ս.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
«Կիրառական արվեստ» մասնագիտությամբ մագիստրատուրայի
2012/2013 ուստարվա ընդունելության

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կարգը, Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի 2012/2013 ուստարվա ընդունելության կանոնակարգը, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունները և այլ իրավական ակտեր:
2. ԵՊՀ ԻՄ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների կիրառական արվեստի բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմ ունեցող անձինք: Այլ պետությունների բուհերի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է ֆակուլտետի խորհրդի գրավոր կարծիքի և հարցազրույցի հիման վրա:
3. ԵՊՀ ԻՄ մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպվում է անվճար և վճարովի հիմունքներով՝ Կրթության և գիտության նախարարության կողմից

հատկացված տեղերի շրջանակներում: Մագիստրատուրա ընդունվածները բաշխվում են անվճար և վճարովի ուսուցմամբ՝ մրցույթի արդյունքներով:

4. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով տնօրենի նախագահությամբ կազմավորվում է ընդունող հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի, ուսումնամեթոդական բաժնի վարիչի, ուսումնամեթոդական բաժնի մագիստրատուրայի հարցերով զբաղվող մասնագետի անդամակցությամբ:

5. Տնօրենի հրամանով ձևավորվում է մանդատային հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի նախագահությամբ, ուսումնամեթոդական բաժնի վարիչի, կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի և ուսումնամեթոդական բաժնի մագիստրատուրայի հարցերով զբաղվող մասնագետի անդամակցությամբ:

6. Քննությունների անցկացման համար տնօրենի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ներգրավվում են տվյալ ֆակուլտետի դեկանը, կիրառական արվեստի ամբիոնի վարիչը և մագիստրոսական ծրագրի դեկավարը:

7. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 3 փուլով.

7.1 **Առաջին փուլում** անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել ԵՊՀ ԻՄ բակալավրիատի ընթացիկ ուսումնական տարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 13 կամ ավելի բարձր միավորներ, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 13:

1) Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

2) Հավասար ՄՈԳ-երի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

-գերազանցության դիպլոմի առկայություն,

-ավարտական աշխատանքի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը:

7.2 Երկրորդ փուլում վճարովի համակարգ կարող են դիմել ԵՊՀ ԻՄ (նաև 7.1. կետի պահանջները չբավարարելու դեպքում) և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի ընթացիկ և նախորդ տարիների շրջանավարտները:

1) Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ «Կիրառական արվեստ» մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով և մասնագիտական կարողությունների վերաբերյալ ֆակուլտետի գեղարվեստական խորհրդի եզրակացությունից ելնելով:

2) Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովի ներկայացրած արձանագրության և ֆակուլտետի գեղարվեստական խորհրդի գրավոր եզրակացության հիման վրա:

3) 7.1 կետի պահանջները բավարարող այլ բուհերի «Կիրառական արվեստ» մասնագիտության շրջանավարտները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:

7.3 Երրորդ փուլում անվճար (բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգ կարող են դիմել ԵՊՀ ԻՄ տվյալ մասնագիտությամբ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող ՀՀ Ազգային բանակում ծառայած դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց քննության մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

- 1) Անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած ՀՀ Ազգային բանակում ծառայած դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:
- 2) Մասնագիտության փոփոխման պարագայում ԵՊՀ ԻՄ կամ այլ ԲՈՒՀ-երի շրջանավարտների ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում՝ «Կիրառական արվեստ» մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով և մասնագիտական կարողությունների վերաբերյալ ֆակուլտետի գեղարվեստական խորհրդի եզրակացությունից:
- 3) Երրորդ փուլով մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել նաև առաջին և երկրորդ փուլում ժամանակին չդիմած անձինք: Առաջին փուլի պահանջներին բավարարող դիմորդները վճարովի համակարգ են ընդունվում առանց ընդունելության քննության:

8. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ,
- բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճեններ,
- 4 լուսանկար (3x4 սմ չափսի),
- զինվորական գրքույկի բնագիրն ու պատճեն (առկայության դեպքում),
- ընդունելության ծառայությունների համար գանձվող 1000 դրամի վճարի անդորրագիր:

9. Փաստաթղթերն ընդունվում են.

- 1-ին փուլով՝ մայիսի 21-ից մինչև հունիսի 4-ը,
- 2-րդ փուլով՝ հունիսի 11-ից մինչև հունիսի 25-ը,
- 3-րդ փուլով՝ օգոստոսի 20-ից մինչև օգոստոսի 30-ը:

10. Ընդունելությունը կատարվում է.

- 1-ին փուլով՝ հունիսի 8-ից մինչև հունիսի 13-ը,

2-րդ փուլով՝ հունիսի 27-ից մինչև հուլիսի 2-ը,

3-րդ փուլով՝ սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 7-ը:

11. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո: